ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 3

"25" .....05..... 2018 թ. N 02/23/3075-18

<<Ինֆորմացիոն ազատության կենտրոն>>
ՀԿ նախագահ Լ. Դոյդոյանին

Ի պատասխան Ձեր 2018 թվականի մայիսի 23-ի
N 332-ի 2 գրության

Հարգելի տիկին Դոյդոյան

Տեղեկացնում ենք Ձեզ, որ 2018 թվականի մայիսի 23-ի դրությամբ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության աշխատակազմում առկա քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները հայտարարված են ըստ համապատասխան առաջնահերթության, որոնք հրապարակվել են <<Հանրային ծառայություն>> շաբաթաթերթի 2018 թվականի մայիսի 10-ի և մայիսի 23-ի համարներում, ինչպես նաև ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության՝ http://mtad.am և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի՝ www.cscouncil.am ինտերնետային կայքերում:

Դրանք են՝

1. Տարածքային կառավարման վարչության տարածքային ծրագրերի և մշտադիտարկման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 11-3.2-17)

2. Տարածքային կառավարման վարչության տարածքային ծրագրերի և մշտադիտարկման բաժնի պետ (ծածկագիր՝ 11-2.2-4)

3. Ներքին աուդիտի բաժնի պետ (ծածկագիր՝ 11-2.2-16)

4. Տարածքային ներդրումային քաղաքականության և ենթակառուցվածքների զարգացման վարչության տարածքային ենթակառուցվածքների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 11-2.3-37)

5. Գնումների համակարգման և տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 11-3.1-11)

6. Տարածքային ներդրումային քաղաքականության և ենթակառուցվածքների զարգացման վարչության տարածքային ենթակառուցվածքների զարգացման բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 11-3.2-20)

7. Վարչական վերահսկողության և համայնքային ծառայության հարցերի վարչության վարչական վերահսկողության բաժնի առաջատար մասնագետ (ծածկագիր՝ 11-3.2-7):

Միաժամանակ տեղեկացվում ենք, որ թափուր պաշտոններ զբաղեցնելու համար մրցույթների հայտարարման գործընթացները կրում են շարունակական բնույթ:

Հարգանքով՝

Մ.Բաղդասարյան

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Կատարող՝ Ն. Կիրակոսյան
Անձնակազմի կառավարման բաժին
Հեռ. 010-511-355